

հասցրեց հայկական թատրոնը մի խումբ վերին աստիճանի անթատրոնական կապիտալիստների կառավարութեանը 1893/94 թւականին:

Մենք կարող ենք ուրեմն համարձակ ասել, որ «Թատրոն»-ի հարատարակիչը մեր բեմին բաւական վնասնելէ նոյն իսկ այդ բեմին ծառափելով՝ Մենք կ'ուղէինք ուրեմն որ թատրոնական դրականնութեանը նաև չվնասի՝ նոյնիսկ նրան ծառափելով։

Ներկայ գրքում զետեղւած են չորս թատերգութիւններ, որոնցից մէկը՝ Մոլիութինն է (Սկասէնի արարքները), միւսը Ֆորդ Օնէի (Դարբնապետը), երրորդը՝ դ'Անկուրի (Միւս անգամ—մենախօսութիւն), — բոլորը թարգմանական, և մէկը՝ Փառնակէսի «Բանաստեղծ» կատակվողը կը կը Պողոսից Պողոսին երկուքը արժանի էին տպագրութեան, իսկ «Բանաստեղծը» և «Միւս անգամ» պի. եսները դատարկ բաներ են։ Դ'Անկուրի «Միւս անգամը» նոյն իսկ ձանձրալի դրածք է, եթէ միայն մի արտասանոր տպանդ չլինի նորա արտասանողը։

Յօդւածների մէջ մեծ տեղ են բռնում Պերճ Պռօշեանցի «Հայոց թատրոնի սկզբնաւորութիւնը Թիֆլուսում» և Ա. Հախումնանի «Թատրոն, բեմ և լեզու» Պարոն Հախումնանի լոդւածը դուրի չէ հետաքրքրականութիւնից, բայց նա ուզենալով ինքն իրանց զերազանցել՝ մոլորութիւնների մէջ է ընկնում։ Մասնաւորապէս ալ, Աղայեանցին նորիքած տղղերը մի ամօթանք կը մնան Հախումնանի համար, որը իւր լոդւածով ապացուց է տալիս թէ որքան նա նաև կեղծել դիտէ, նայած թէ քամին որտեղից է փշում։

Բացի լիշածներից՝ տպւած է 70-ական թագաններին վախճանած գերասան Գէորգ Միրազեանի կեն. սադրութիւնը, Ֆրէնդից բեմական պատկերներ, Գէօթէի «Աւանուններ գերասանների համար» և թատրոնական քրոնիկների արտասահմանից և Պետերբուրդից։

Բայց մի անհրաժեշտ բան՝ այն է տեսութիւն մեր հայկական թատրոնի—բացակայում է բոլորովին։

Ա. Ա.

ՅԱՅՄԱՐԻՕՆ, Կամիլլ. — «Հանրամատչելի նկարագրական աստղաբաշխութիւն» (Petite astronomie descriptive); Թարգմանեց Փրանսէրէնից (4-րդ տպագրութիւնից) Տ. Յովհաննիսեան; Թիֆլիս, տպ. Պոտիննեանցի 1893 թ. Հրատարակութիւն Թ. Հ. Հրատարակչական ընկերութեան, ութածալ, 353 էջ, գինն է 1 ռուբլի։

Կամիլլ Ֆլամմարիոնի անունը պատկանում է ամենափալուն ժողովրդա-

կանացնողների անունների թվին։ Այդ գիտնականը մի առանձին տաղանդ

ունի զարմանալի կերպով ժողովը՝ դականացնել գիտութեան նոյն իսկ բարդ փաստերը Վերին աստիճան պարզ մատչելի լեզու և շքեղ՝ հետաքրքրութիւն շարժող՝ պատմելու ձև — առաջ ֆլամմարիսնի գրւածքների լատկանիշը:

Նոյն ազդ առաւելութիւնները գոլութիւն ունեն նաև այժմ մեղ հետաքրքրող գրւածքի մէջ։ Հայոց թարգմանութիւնը կատարւած է իսկապէս Շ. Դէլոնի փոխադրութիւնից։ Դէլոնը ուսումնարանների համար չարմարեցրել է Կ. Ֆլամմարիսնի աստղաբաշխութիւնը։

Հանրամատչելի նկարագրական աստղաբաշխութիւնը բազկացած է քսան դասերից, որոնք պարունակում են իրանց մէջ աստղաբաշխութեան ամենանշանաւոր իրողութիւնները։ Այդ գրւածքի մէջ խօսում է երկրի ձերի և շարժման մասին, արևակի դրութեան, կազմւածքի և նշանակութեան մասին, մոլորակների և նրանց արբանեակների մասին, աստղերի և գիսաւոր աստղերի մասին և այլն։

Նիւթը աւելի ես պարզ դարձնելու համար գրւածքում զետեղւած են նկարներ (թւով հարիւր), այդ նկարները դրած են նաև հալոց թարգմանութեան մէջ, ոսկան տարաբաղդաբար շատերը նրանցից անաջող են։

Թարգմանութիւնը կատարել է պ. Տովհաննիսեան բարեխիղճ կերպով և ուղղակի ֆրանսերէնից։ Ի դէպ է աստեղ ասել, որ մեզանում թարգմանութիւնները կատարւում են ըստ միծի մասին ոչ թէ ուղղակի եւրոպական բնագիրներից, այլ այդ գրւածքների ուսուաց թարգմանութիւններից, ուստի և շատ անզամ այդ գրւածքները աղաւազւում են։

Ֆլամմարիսնի գրւածքի թարգմանութիւնը պատկանում է հաստարակչական ընկերութեան «Հանրամատչելի գիտական ընթերցարանի» շարքին։ Հանրամատչելի աստղաբաշխութիւնը անկասկած այդ ընկերութեան լաւագոն հրատարակութիւններից մէկն է։